ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Վաղարշապատ համայնքում կիրառական կրթության զարգացման ուղղությամբ առկա են մեծ ներուժ և կարիք՝ երեխաների մոտ վաղ տարիքից ձևավորելու տեխնիկական մտածողություն, խնդիրների լուծման հմտություններ և նորարար գաղափարների իրագործման կարողություն:

Այս համատեքստում, «**ԱՐՄ ԷԼԵԿՏՐՈՆԻԿ**» ռոբոտաշինության և ինժեներական հմտությունների կենտրոնը կարևոր դերակատարություն ունի Հայաստանում տեխնոլոգիական կրթության խթանման և տարածման գործում: Կենտրոնը իրականացնում է ուսուցում հետևյալ ոլորտներում՝

- Ռոբոտաշինություն
- Ֆիզիկա և մեխանիկական ինժեներիա
- Ծրագրավորում
- Արհեստական բանականություն
- STEM կրթության այլ ուղղություններ

Այս հմտությունները համապատասխան են 21-րդ դարի պահանջներին և նպաստում են նորարար տեխնոլոգիաների ոլորտում մրցունակ սերնդի ձևավորմանը: Հայաստանում գործող **«Arm_Electronik» ռոբոտաշինության և ինժեներական հմտությունների կենտրոնը /2 դպրոց՝ Երևանում/** արդեն իսկ ապացուցել է իր արդյունավետությունը՝ մատուցելով որակյալ, կիրառական և ապագային միտված կրթություն: Կենտրոնը տալիս է երեխաներին ու պատանիներին ֆիզիկայի, ծրագրավորման, մեխանիկական ինժեներիայի և արհեստական բանականության հիմունքները՝ զուգակցված պրակտիկ աշխատանքով: Նրանց աշխատանքը ոչ միայն կրթական ոլորտում է բարձր գնահատանքի արժանացել, այլև ազգային մակարդակով. **Arm_Electronik կենտրոնը վերջերս արժանացել է «Մեր ժամանակի հերոսը» մրցանակին**, որպես օրինակելի նախաձեռնություն, որը նպաստում է կրթության, նորարարության և երիտասարդների զարգացմանը Հայաստանում:

Կենտրոնի հիմնադիրները՝ հանդիսանալով Վաղարշապատ համայնքի բնակիչներ, պատրաստակամություն են հայտնել ռոբոտաշինության և ինժեներական հմտությունների ուսումնական մասնաճյուղ հիմնել նաև Վաղարշապատ համայնքում՝ մատչելի և որակյալ կրթություն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հինադիրներն Էջմիածին քաղաքում ունեն համապատասխան տարածք, բարեգործական աջակցությամբ ապահովվել են անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, սեփական միջոցներով կատարել են կենրոնի գործունեության համար նախատեսված երկհարկանի շինության նորոգումն ու կահավորումը, առաջարկում ենք աջակցել մեր համաքաղաքացիների նախաձեռնությանը՝ Վաղարշապատի համայնքային բյուջեից 2 մլն դրամ հատկացնելով կենտրոնի երկհարկանի շինության արտաքին տեսքի և շրջակայքի բարեկարգման նպատակով:

Այս ներդրումը կլինի ոչ միայն կրթական, այլև սոցիալ-տնտեսական զարգացման խթան համայնքի համար՝ ձևավորելով նոր հնարավորություններ երիտասարդ սերնդի համար:Այն հնարավորություն կընձեռի համայնքի երեխաներին ու պատանիներին՝ մասնակցելու ոչ միայն դասընթացների, այլև հանրապետական և միջազգային մրցույթների, ստանալ փորձառություն և ներգրավվել տեխնոլոգիական ոլորտներում: Համայնքում կենտրոնի գործունեությունը հնարավորություն կտա ընդլայնել գործունեությունը նաև համայնքի նախադպրոցական հաստատությունների և դպրոցների հետ համագործակցության ձևաչափով: